

L. Speckly

Young of the

891.715

F-62

ՎԻՏԱԼԻՅ ԲԻԱՆԿԻ 30 MAY 2011
ՓՈԽ ԱԹ ԻՆԿՈՅԱՆ



Առաջին
Վերա



ՁՈՒՂԻՄ
Բ-62

Նկ.Վ.Ավարոզյան

ՊԵՏՅՐԿՏ-1927

Uy



7988-53

ՍՈՒԱՋԻՆ ՎՈՐԱԸ



Շան լակոտը հավերին բակում
դես-դեն բշելով հոգնեց.
— Գնամ, — մտքումն ասում է, — վայրի
զազան ու թռչուն վորսամ:

Հակոտն իրեն դուրս գցեց բակի շնմբից



և մինչև դաշտ մեկ վազեց:

7988-53



Վայրի գազանները, թռչունները տեսան նրան
ու ամեն մեկն իր մտքումն ասում է.—

Ճանճային Զրցուն ասում է.

—Յես նրան ենպես խաբեմ վոր:



Հոպուպն ասում է.

—Ենպես զարմացնեմ վոր:



Պարտան վզիկն ասում է.—Ենպես վախեցնեմ վոր:

Ուղեգիրն ասում է.

—Ձեռքիցն ենպես դուրս պրծնեմ վոր:



Թիթեռ ու
Թրթուռ,
ճպուռ ու ճոխ
ասում են.
—Ձե. նրանից
ենպես տապ
անենք վոր:



Ռմբաձիգ բզեզն ասում է.

—Յես նրան ենպես վախեցնեմ վոր:



—Ձե. մենք բոլորս պաշտպանել գիտենք մեզ. ամեն մեկն իր ձևի,
—ասում են նրանք մտքներում:

Իսկ լակոտն արդեն վազեց դեպի լճակը. —

Ու տեսնում ե

Ջրցուլը յեղեգնուտում կանգնած ե մի վոտի վրա
մինչև ծունկը ջրում:



— Իսկույն յես նրան բռնեմ,
— մտածում ե լակոտը և են ե՝
պատրաստվում եր, վոր ցատկի
նրա մեջքին, —

Ջրցուլը նայեց նրան ու մտավ յեղեգնուտը:

Քամին վազում ե լճակի յերեսով, յեղեգները շարժում: Յեղեգներն որոր-
վում են

յետ — առաջ,

յետ — առաջ:

Լակոտի աչքի առաջ դեղին և շագանակի
շերտերը ճոճվում-որորվում են

յետ —

առաջ,

յետ —

առաջ:



Իսկ Ջրցուլը կանգնած ե յեղեգնուտում,
ձգվել ե վեր — ենպես բարակ-բարակ ու ամբող-

ջովին նաշխվել ե դեղին ու շագանակի գույն շերտերից: Կանգնել ե, որորվում ե՝


յետ — առաջ,

յետ — առաջ:

Լակոտը աչքերը չռեց, նայում ե, նայում. չի տեսնում Ջրցուլին յեղեգ-
նուտում:

— Ե՛, — ասում ե, — Ջրցուլն ինձ խաբեց, հո չեմ մտնի դատարկ յեղեգնուտը:
Կզնամ, ուրիշ թռչուն կբռնեմ:

Վազեց բարձրացավ բլուրի վրա,
նայում է.



Գետնին նստած է հոպոպը ու գլխի սանրի՝ փուփուլի հետ է խաղում:

Մեկ բաց է անում,



մեկ ծալում է.

Ես ե հա՛ բլրից նրա վրա կթռչեմ,
— ասում է լակոտը

Դուրս Գոպոպը



կալավ գետնին,
թեվերը փռեց,
պոչը բացեց,
կտուցը վեր տնկեց:

Նայում է լակոտը և ինչ. ո՞ւր է թռչուն, չկա. գետնին ընկած է մի փալաս,
մի հին չալաիկ շորի կտոր, վրան ցցված մի ծուռտիկ ասեղ:

Զարմացավ լակոտը. ո՞ւր կորավ հոպոպը: Միթե են գունավոր փալասը նրա
տեղն եմ ընդունել: Ես ե՛ — գնամ մի փոքրիկ թռչուն բռնեմ:

Վազեց ծառի մոտ, տեսնում ե.



Նստել ե ծառի ճյուղին
պտըտան-վզիկ
դեղին ծիտիկը:



Վրա պրծավ, բայց պտըտան վզիկը հոպ, ծլկվեց ծառի փշակը:
Հը,—ասում ե—լակոտը,—չես պրծնի: Կանգնեց յետի թաթիկները վրա,
նեղս նայեց փշակը և ինչ. ասես թե փշակում մի սև ոձ գալարվում ե, կուշ ու
ձիգ անում ու սաստիկ ֆշշում:

Լակոտը յետ թռավ, մազերը բիզ-բիզ կանգնեցին

ու մեկ ել՝ պոռկ...



Իսկ պտըտան վզիկը
ֆշշացնում ե
փշակից դուրս
դուրս հանած:



Նրա մեջքին՝ սև բմբուլների շերտը գալարվում ե ոձի պես: Լակոտը փա-
խավ-հեռացավ, նստել ե ու մտածում:

—Ո՛ք, ինչպես վախեցրեց: Հագիվ ինձ քարշ տվի: Ել թռչնավորս չեմ գնա:
Լավ ե գնամ խլեզ բռնեմ:

Խլեզիկը նստած ե քարին, աչքերը խփած տաքանում ե արևի տակ:
Լակոտը կամացուկ մոտեցավ նրան



ու հոպ,

բռնեց պոչից:

Իսկ խլեզիկը դուրս պրծավ պոչը թողած լակոտի բերանում ու մտավ քարի
տակ:

Պոչը լակոտի ատամների տակ գալարվում ե:



Փը՛ռո:



Լակոտը փռուացրեց, շարտեց պոչը ու խլեզի յետևից: Բայց ել վճռեղ-
խլեզիկը վազուց քարի տակ նստած՝ նոր պոչ ե բուսցնում:

—Ե՛,—ասում ե լակոտը, վոր խլեզիկն ել ձեռքիցս դուրս պրծավ, գնամ
գոնե միջատներ վորսամ:

Նայեց շուրջը. գետնի վրայով բզեզներն են վազվզում, խոտերում ճուխ-
ներն ու ծղրիզներն են թռչկոտում, ճյուղքերի վրայով թրթուռներն են սողում,
ողում թիթեռները թռչում:



Հակոտը վրա պրծավ,
վոր նրանց բռնի և հանկարծ պատկերը փոխվեց:

Վոչ մեկը չի յերևում,



բոլորը թափնվեցին:


Կանաչ ձյուղիկները կանաչ խոտերում տապ աղին:
Թրթուռները ճյուղքերի վրա մեկնվեցին, սուս-սասուկեղ աղին:
Թիթեռները նստեցին ծառերի վրա, թևերը ծալեցին, չես վորոշի՝ վո՞րն է
կեղևը, վո՞րն է տերևը, վո՞րն է թիթեռը:

Միայն են փոքրիկ ուրախի՜
 ուռմբ արձակող բզեզն ե,
 վոր գնում ե իր համար
 վոչ մի տեղ պահ չի մտնում:



Հակոտը հասավ յետևից, ուզեց բռնի,

բայց ուրախի՜ գը կանգնեց ու իրենից
 դառն հեղուկի մի այնպիսի շիթ բաց թողեց,



վոր ուղիղ լակոտի քթին կպավ:

Հակոտը փնգստաց, պոչը քաշեց, յետ դարձավ,
 ելի են դաշտով, ելի իր բակը:



Մտավ իր տնակը,
 վախում ե՜
 քիթը դուրս հանի:

Իսկ թռչուններն ու միջատներն
 ելի իրենց գործն սկսեցին:



ԳԻՆԸ 50 Գ.



ԳՐԱԴԱՐԱՆ 214-Բ-ՏԻՐԱԿ 5000-Հ. ՄՅ 550 — ԿԻՄԱԳՐ. ՀԱՅԴՈՒԼԻԳ. ՊԱՏ. ՄՅ 3373

ՀՀ Ազգային գրադարան



NL0391164

2750